



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 9 ՆՈՅԵՄԲԵՐ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ Ինձ իմաստութիւն ԿԲԱՐԻՍ ԽՈՐԻԵԼ ԵՆ ԽՍՍԵԼ ԵՆ ԳՈՐԾԵԼ առաջի քո լամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա ԿԻՍ. ԵՆ ՈՂՈՐՄԵԱ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՍՈՂՈՄՈՆԻ 2

ՓՆՏՈՒԵԼ ԶԱՍՏՈՒԱԾ ԵՒ ՓԱԽՁԻԼ ՄԵՂՔԷՆ

Անիրաւ մարդիկ այսպէս խորհեցան իրենց սրտին մէջ.
«Մեր կեանքը կարն է եւ ցաւերով լեցուն.
Եւ երբ մարդը հասնի իր վախճանին, ոչ մէկ փրկութիւն կայ,
Եւ չկայ մէկը որ վերադարձա՞ծ ըլլայ գերեզմանէն:
Մենք պատահաբար ծնած ենք, եւ ասկէ ետք ալ չեղածի պէս պիտի ըլլանք:
Մեր անունը պիտի մոռցուի ժամանակի ընթացքին,
Եւ մեր գործերը պիտի չյիշուին:
Մեր կեանքը սահող ստուեր է,
Եւ ոչինչ կարգիլէ մարդուս վախճանը:
Ուրեմն, եկէ՛ք վայելենք այն բարիքները որոնք կան:
Եկէ՛ք գինովնանք տարբեր-տարբեր գինիներով ու անուշ իւղերով:
Եկէ՛ք անիրաւութեամբ բռնադատենք տնանկը, եւ չխնայենք որբին:
Թող մեր ոյժը դառնայ արդարութեան օրէնք:
Դարանակալ ըլլանք արդարին,
որովհետեւ կը նախատէ մեզ՝ օրէնքներուն դէմ մեղանչելունս համար,
կը պարսաւէ մեզ՝ մեր երիտասարդական մեղքերուն համար:
Մեր առջեւ՝ մեր խորհուրդներուն յանդիմանութիւնն է ան:
Անոր կեանքը տարբեր է ուրիշներէն:
Ինքզինք Տիրոջ որդի կը կոչէ, եւ հպարտութեամբ Աստուծոյ՝ Հայր:
Տեսնենք արդեօք ճշմարի՞տ են անոր խօսքերը,
Եւ փորձենք տեսնել, ինչ պիտի ըլլայ անոր վախճանը:
Եթէ Աստուծոյ որդի է, թող Աստուած պաշտպանէ
Եւ ազատէ զինք իր հակառակորդներէն:
Թշնամանքով եւ ծեծով խոշտանքներ գինք,
որպէսզի տեսնենք անոր հեգութեան ու համբերութեան չափը:
Խայտառակ մահով դատապարտենք զինք,
արդեօք Աստուած օգնական պիտի ըլլա՞յ իրեն»:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուր Երրորդութիւն, տուր աշխա՛հիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւ՛ն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 1)



ՈՂՋՈՅՆ ԵՒ ԳՈՀՈՒԹԻՒՆ

«Պօղոս, Աստուծոյ կամքով Յիսուս Քրիստոսի առաքեալը ըլլալու կոչուած...»:

Պօղոս Առաքեալ, ծնած է Կիլիկիոյ Տարսոն քաղաքին մէջ, փարիսեցի ծնողներէն, եւ ինք որպէս մոլեռանդ ու նախանձախնդիր փարիսեցի իր ազգային, կրօնական ու հայրենի աւանդութիւններուն անաղարփ պահպանման: Պօղոս իր ուսումը կը ստանայ Երուսաղէմի Գամաղէլի մօտ: Նաեւ ան հետեւած ըլլալու է հելլենական ուսման եւ քաջածանօթ յունական մշակոյթին: Ան հռոմի քաղաքացի է նաեւ: Հետեւաբար այս բոլորը ցոյց կու տան, որ հրեական, հելլենական ու հռոմէական համադրումը կայ Պօղոս Առաքեալի խառնուածքին մէջ:

Առաջին անգամ ան կը յայտնուի Սրբեփանոսի քարկոծումի ժամանակ: Սրբեփանոսի ունեցած քաջութիւնը, անոր դէմքին աստուածային փայլքը, ճառը, ու մանաւանդ «Մարդու Որդին» փեսած ըլլալու հանգմանաբը, ու քաջաբար նահապակութիւնը յանձն առնելը մեծապէս կ'ազդեն Պօղոս վրայ, որուն պիտի յաջորդէր իր դարձը Դամասկոսի ճամբուն վրայ: Ան Դամասկոսի մէջ կը մկրտուի: Ժամանակ մը կ'առանձնանայ Արաբիոյ անապարը: Կ'անցնի Երուսաղէմ եւ Բարնաբասի առաջնորդութեամբ ինքզինք կը յայտնէ Առաքեալներուն: Ան կ'ունենայ առաքելական ճամբորդութիւններ քարոզելու եւ հիմնելու քրիստոնէայ համայնքներ: Ան իր կեանքի վերջին հանգրուանին կը բանաւարկուի Հռոմի մէջ, եւ ապա 60-ական թուականներուն կը նահապակուի:

Աւանդութեան համաձայն, իր մասին այսպէս կ'արտայայտուին. «Մարդ մը, կարճ հասակով, ցանցառ մազերով, ծուռ սրուքներով, բարեկազմ մարմնով, իրարու կցուած յօնքերով, քիչ մը կոր քիթով, եւ շնորհներով լեցուն. որովհետեւ երբեմն մարդու մը պէս կ'երեւէր, երբեմն ալ հրեշտակի մը դէմք կ'ունենար» (Գործք Պօղոսի եւ Թեկոյի): Ան նաեւ կը փառապէր հիւանդութենէ մը, որուն համար յաճախ կը կոչէ «մարմնի խայթոց»: Թէեւ փարբեր կարծիքներ կան այդ մասին, բայց ամենահաւանականը Մալարիա հիւանդութիւնն է կ'ըսեն: Ան եղած է կորովի, խանդավառ, գործունէայ, յարաբերող: Ան ճանչցուեցաւ որպէս հեթանոսաց Առաքեալ:

Սկսելով Պօղոս անունի իմաստէն: Յունարէն Պաւլոս կամ Պաւղոս: Յերոնիմոս զայն կը թարգմանէ «սքանչելի, վսեմ»: Գրիգոր Նարեկացի իր Մարեան Ողբերգութեան աղօթամատեանին մէջ կը կոչէ «զարմանալի»: Այս անունը սակայն, եբրայական անուններու մէջ չենք գտնէր մինչեւ Մակաբայեցւոց շրջան, այսինքն՝ մինչեւ հրեաներուն շփումը յոյներու եւ հռոմէացիներու հետ: Յունարէնով կը նշանակէ «խաղաղադաձ», իսկ լատիներէն՝ «կարճ, պզտիկ, քիչ»: Գործք Առաքելոցէն զիտենք նաեւ, որ ան կը կոչուէր Սօղոս, կամ Սաուղ, Սաուլոս: Այս անունին կապակցաբար կան փարբեր մօտեցումներ: Շարեր զայն կը նկատեն, որպէս նոյն անունին փարբերակը Պօղոս-Սօղոս: Ոմանք կը նկատեն, որպէս անուանափոխութիւն: Բայց այս փարբերակը այնքան ընդունուած չէ, որովհետեւ յաճախ այդ երկու անուններուն մենք կը հանդիպինք: Իսկ երրորդ փարբերակը, որ Առաքեալը արդէն իսկ ունէր երկանուն: Ինչպէս օրինակ՝ Մաթթէոս՝ Ղեի, Բարթողիմէոս՝ Նաթանայէլ:

Աստուծոյ կամքով «Կոչուած է Առաքեալ»: Նախ այս կոչումը Աստուծոյ կամքով եղած եւ ոչ թէ մարդկային, կամ Պօղոսի իսկ կամքով: Այսինքն՝ առաքեալի կոչում ունեցող: Այս հաստատումը անոնց համար, որոնք կասկածելի կը նկատէին Պօղոսի առաքելական կոչում ունենալը: Իսկ «առաքեալ» կը նշանակէ մէկը մէկու մը կողմէ դրկուած, առաքուած, պատգամատուր, ներկայացուցիչ, որ նաեւ դրկողին իշխանութիւնն ու լիազօրութիւնը ունի գործելու եւ փնտրիւթիւններ ընելու յանուն զինք դրկողին, այսինքն՝ Յիսուս Քրիստոսին:

Սուրբնէն՝ մեր եղբայրը: Այս անձին մասին շար րեղելութիւններ չկան, բացի անկէ, որ կարելի է հետեւցնել, որպէս Առաքեալին գործակիցներէն եւ կամ այս նամակը գրի առնող: Բայց եւ այնպէս ծանօթ Կորնթացիներուն: Նաեւ այս անունը կը յիշատակուի Գործք 18:17ի մէջ, երբ հրեաներու կողմէ կը ծեծուի Պօղոսի հանդէպ ունեցած համակրութեան համար, բայց ինք ալ Կրիստոսի նման դարձի կու գայ եւ կը կոչուի «եղբայր»: Եղբայր անուանումը կը նշանակէ քրիստոնէայ այր մարդ, իսկ «քոյր» քրիստոնէայ կին: Այս արտայայտութիւնը կու գայ Աստուծոյ բոլորին Հայրը ըլլալու հանգամանքէն:

«Կը գրենք ձեզի, Կորնթոսի մէջ հասարպուած Աստուծոյ եկեղեցիին» (հմր 2): Պարզապէս «Եկեղեցի մը» չէ, այլ՝ Աստուծոյ Եկեղեցին, որպէս մէկ եւ ընդհանրական: Այդ մէկութիւնը Քրիստոսի անձով, աստուածային ներկայութեամբ: Հակառակ ներքին պառակտումներուն, Եկեղեցոյ միութեան շախաղը մարդիկը չեն, ոչ ալ մարդկային մրաժողովինը, այլ՝ Աստուած ինք: Տակաւին, հակառակ կորնթոսի եկեղեցոյ բարոյական թերացումներուն, պոռնկութեան, եւ այլ կարգի անկումներուն, անոնք Քրիստոսով Հօր Աստուծոյ ընծայուած եւ Աստուծոյ սուրբ ժողովուրդը ըլլալու կոչուած են: Աստուած երբ զիրենք կանչեց մոլութիւններու մէջ կորսուած խեղճութիւն մըն էին, ոչնչութիւն, բայց Աստուած զիրենք կանչեց սրբութեան բարձրացնելու համար (1:26-28): Ճիշդ է որ կարարեալ չեն, բայց կոչուած են կարարելութեան, արդարութեան եւ սրբութեան: Այդ յարկանիշները իրենք իրենց մէջ չունին, բայց ունին իրենց Գլուխով՝ Քրիստոսով: Քրիստոսի Եկեղեցին իր գլուխով Սուրբ է, որքան ալ անոր անդամները՝ ուրբերը ըլլան այս աշխարհի ցեխէն իրենց բաժինը ունեցող:

«Թող Աստուած մեր Հայրը եւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի» (հմր 3): Քրիստոնէական ողջոյնը՝ իր կարեւոր երկու փարբերով, շնորհք եւ խաղաղութիւն: Առաջինը փրկութեան պարգեւն է, իսկ երկրորդը՝ այդ փրկութեան առաջին պտուղը, հաշտութիւն Աստուծոյ հետ, ինքզինքին եւ մարդոց հետ:

«Միշտ ձեզի համար շնորհակալութիւն կը յայտնեն իմ Աստուծոյս՝ այն շնորհքին համար, որ ձեզի փրկուեալ Յիսուս Քրիստոսի միջոցաւ» (հմր 4): Հակառակ ներքին պառակտումներուն, Պօղոս շնորհակալութիւն կը յայտնէ Աստուծոյ՝ Կորնթացիներուն փրկութեան շնորհքին եւ միւս պարգեւներուն համար: Պօղոս կրնայ յուսախաբ ըլլալ փրկող կացութեան պարճառով, բայց երբեք չի կասկածիր, որ Աստուած իր անսահման իմաստութեան մէջ իր շնորհքը առափօրէն պարգեւած է Կորնթացիներուն՝ յարուկ նպարակով մը:

Միւս կողմէ, նաեւ փրկութեան շնորհքները գրաւական մը չեն մեղքէն հեռու մնալու, ընդհակառակը, կրնան մեղքի առաջնորդել, երբ այդ շնորհքները չարաշահեն եւ արով պարծենան:

«Ամէն բանի մէջ հարստացաք իրմով, թէ խօսքի առաքութեամբ, եւ թէ գիտութեամբ» (հմր 5): Աստուած ամէն բանով հարստացուց զիրենք, ոչ թէ նիւթապէս, այլ՝ հոգեւորապէս, թէ իր խօսքով, եւ թէ իր ծրագրին գիտութեամբ:

«Ուեւ շնորհք չի պակսիր ձեզի, մինչ կը սպասէք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի յայտնուելուն» (հմր 7): Որքան ալ պարգեւներով օժտուած ըլլան, բայց Պօղոս կ'ուզէ որ անոնց հայեացքը ուղղուի դէպի Քրիստոսի գալուստը: Այդ պարգեւները կարեւոր են, բայց ժամանակաւոր են, միայն ներկային համար, մինչ իրենց ամբողջ կեդրոնացումը պէտք է ըլլայ սպասումը Քրիստոսի գալուստին, եւ պարգեւներէն ամենակարեւորը Մէրը, եւ այդ սիրով սպասելու:

«Եւ Աստուած մինչեւ վերջ հասարպուն պիտի պահէ ձեզ, որպէսզի անմեղադրելի ըլլաք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի դատաստանի օրը» (հմր 8): Պօղոս վստահութեամբ լեցուն է, թէ Աստուած, որ զիրենք կանչեց, զիրենք հասարպուն պիտի պահէ, հակառակ իրենք սխալներուն: Մենք ներկան կը փեսնենք, բայց Աստուած գալիքը գիտէ: Պօղոս յոյս ունի, որ Աստուած նաեւ ինք կ'առաջնորդէ զիրենք, այնպէս որ դատաստանի օրը անմեղադրելի ըլլան, եւ արժանանան Աստուծոյ ներկայութեան կանգնելու՝ արդարացած եւ սրբուած:

«Վստահեցէք Աստուծոյ, որ ձեզ կանչեց՝ հաղորդակից դառնալու իր Որդիին, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի» (հմր 9): Պօղոս քրիստոնէական հաւատքի այս ճշմարտութիւնը կը շեշտէ, թէ Աստուծոյ նպարակն է մարդիկը վերադարձնել իրեն: Եւ Աստուած հաւատարիմ է իր նպարակին: Ուրեմն, այս արտայայտութիւնը թէ՛ կոչ մըն է, որպէսզի փրկութեան շնորհքին եւ ամէն բանի մէջ կարարելապէս վստահին Աստուծոյ, եւ թէ՛ անուղղակի դիպողութիւն մըն է, յիշեցնելով թէ իրենք փոխանակ Աստուծոյ վստահելու, վստահած են իրենք իրենց առաւելութիւններուն, ըլլայ մարդկային, ըլլայ Աստուծմէ պարգեւուած շնորհքներուն:

ԱՐԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*